«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
Թողարկողի անվանումը՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկվող դոլարային պարտատոմսերի հիմնական պայմանները	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Արժեթղթերի ձևը	Ոչ փաստաթղթային
Մեկ արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի քանակը	20 000 հատ
Մեկ թողարկման ընդհանուր ծավալ	2 000 000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք)	Տարեկան 5.50%
Արժեկտրոնային եկամուտների վճարում	Կիսամյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	36 ամիս
Երկրորդային շուկա	«Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ
Թողարկման ամսաթիվ	23/02/2026թ.
Տեղաբաշխման ժամկետ	23/02/2026թ.-23/07/2026թ.
Տեղաբաշխող	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Պարտատոմսերը կարող են ձեռք բերել ֆիզիկական և իրավաբանական անձիք AEB MOBILE հավելվածի և/կամ AEB ONLINE համակարգի միջոցով, ինչպես նաև ներդրողները կարող են մոտենալ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ՝ ներկայացնելով սահմանված կարգով լրացված Պարտատոմսերի ձեռքբերման հայտ/հայտեր:	
Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում և ունենալու են շուկա ստեղծող:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվը	23/02/2029 թ.

Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով.	
Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում՝	23/08/2026
Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում՝	23/02/2027
Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում՝	23/08/2027
Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում	23/02/2028
Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում՝	23/08/2028
Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում ՝	23/02/2029 (մարում)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է 24.12.2025թ. թիվ 1/484Ա որոշմամբ), դրա լրացումները և Թողարկման Վերջնական պայմանները: Ծրագրային Ազդագրի, դրա լրացումների և թողարկման վերջնական պայմանների էլեկտրոնային տարբերակները կարելի է ներբեռնել www.aeb.am կայքի «Արժեթղթեր և արտարժույթ» բաժնի «Պարտատոմսերի ընթացիկ տեղաբաշխումներ» ենթաբաժնից, իսկ թղթային տարբերակը հնարավոր է ձեռք բերել՝ այցելելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գլխամասային գրասենյակ, հասցե՝ ք. Երևան, Ամիրյան 23/1: